



200. ՍՔՅՈՎԸՐԻ ԿՆԵԳՑԸ

Մին մարթ, մինզյել մին կնեգյ ըն ինում: Տահանք ուրժութ
շատ ըն ինում սիրիլիս: Մարթ ու կնեգյ խոսկ ըն տամ, վրեր ու-
րանց անա մինը մըռնելանը ետք վրել մարթը կնգան նհետ խոսե,
վրել էլ կնեգյը՝ մարթու նհետ: Հունց ա պըտահում, վրեր մարթը
շնուտ ա մըռեռնում, կնեգյը մարթին ուրան հըյաթումը թաղում ա,
սըկ շնրերը կյենում, իրեք տարե սուրբ պահում: Տահանց տոնն
էլ մըռեծ հըյառու զրադի յա ինում: Իրեք տարեն վրեր անց ա կե-
նում, տընդավ մին մըռեծ քյարվան ա քյինամ, հենց տընդ էլ եր
կյամ, վրեր դինջանան: Էտ քյարվանեն մին քանի մարթ քշերեն
կենումը եշում ըն, տընսնում մին պկցուր տան ճիրաքյ ա էրում:
Տահանք գյիդալիս ըն ինում, վրեր էտ կնեգյը իրեք տարե սուրբ
ա պահում: Քյարվանքաշին ուրան հնզըներունցը նհետ խոսում
ա, ասում ես կըկարեմ քյինիմ էն կնգանը խոսըցընեմ: Տահանք
ասում ըն կարալ շըս:

Քյարվանքաշին քյինամ ա էտ կնգանը տանը տոռնը թակում,
ասում զարիք մարթ ըմ, մըթեն ըմ ինզյալ, տոռնը պեց ըրա, էտ
քիշեր ինձ զոնազ ընթումե: Կնեգյն ասում ա կարալ շըմ, էտ ա
իրեք տարե յա մարթըս մըռեռած, ես սիթյը վրեր: Էտ մարթն ասում
ա.—Ախեր իմ գանրդըս էլ ա քու գանրդմտ, էս ա իրեք տարե յա իմ
էլ կնեգյըս ա մըռեռած, ես էլ ըմ իլալ սուրբ պըհելիս, տընսալ ըմ,
վրեր տի ընելավ մենակ ինձ ըմ վնաս տամ, սուրբյը թողալ ըմ,

մեհենդյ օգում ըմ մին կնեցյ քթենամ, նշետը փսակվեմ, թա չէ, էսքան քյարվանը, էսքան Հարստութումը իմն ա, վըել կնեցի օնեմ, վըել էլ խոխա, վըեր տրոթում անեն, կնեցյը թա.—ՎՌՎ, վըեր քու գարդըտ էլ ա իմ գաղրդան, տոռնը պեց անեմ, նազլ ըրաւ ծր ա կենում, տոռնը պեց անում, մարթը մին խրեցյ կենում ա, թա քյինամ քյըրվանեն մարթուցը պեն օնեմ ըսելի, ասեմ, էլլա քշերավ կըկյամ, զրուց կանենքյ: Կնեցյը թա՝ չէ, վըեր իմ գարդը քու գաղրդատ ա, էս քշեր ըստորեղ կաց, էքյուծ կըքյինամ: Մարթըն ասում ա.—Քյինամ, էլլա շնւտ կըկյամ: Կնեցյը թա՝ դե վըերքան կարես, շնւտ եք:

Մարթը քյինամ ա, ետ կյամ, վուազ-վուազ կնգանն ասում էսհինչ բեկին շուրջնեն եկալ ըն, թա մեր քյըրվանան ապրանք կյուզանան, իմ քյըրվանես մարթիքյը մինին ըսպանալ ըն, դիակը կուրցըրալ, մեհենդյ կարում շըն քթենան, բեկն էլ ասալ ա յա դիակը տոնւ կալիքյ, յա կլիլական ըմ ծըեր քյըրվանեն մարթուցը լոխ կըտորեմ: Էտ կնեցյը թա վըեր տի պեն կա, էս ա իմ մարթիս դիակը տոնւ օնենքյ, տար ասե էս ըսպանված շորանն ա: Քյարվանքաշին ասում ա դե միայն շնւտ քյինինքյ, թա չէ, բեկը կյալու վա լոխ տըկըտիյեր անե, կնեցյը թա՝ քյինինքյ: Քյինում ըն կյիրեզմանը քանդնւմ, մեյդը տոնւ օնում, տըեսնում իրեսեն մազերը եկած, մըրոքն ըրկընացած: Քյարվանքաշին ասում ա.—Պա էն շուրպանեն մըրոք լի իլալ, կնեցյը թա՝ դե լավ, պեր սրա մըրոքը քանդինքյ, տանենքյ: Քյարվանքաշին կզնըվում ա, ասում:—Էտ ա քու սուրքյ՝ տանենքյ, բալի վըեր ես էլ մըեռնեմ, ինձ էլ տի անես: Ստնան էլ դաման տհնւա ա օնում, թխում էտ կնգանն ըսպանում, հզե ինհնւմ, քյինհնւմ:

